

խորհրդածեր, մին իւր տերութեան կառավարութիւնը կը մոռնար՝ միւսը՝ իւր կերակուրին վիճակը:

Ռշտունեաց տերը, որ յունաց սովորութեանց լաւ տեղեակ էր՝ անրնդիատ յարաբերութիւն ունենալով այս ազգին հետ, որ գրեթէ Պարսից տերութեան անիշխանութեան եւ տկարանալէն վերջ Զայաստանի տեր ինքզինք կը համարէր, ամէն տեսակ տեղեկութիւն կը հարցներ, կը փնտրէր այդ յունական սպային, որ իւր Զարցմանը խելօք եւ գոհացուցիչ կը պատասխանէր, եւ որ մեծն է տխուր համեստութեամբ զարմացուց զթեոդորոս, մինչեւ որ իւր սովորական զգոյշ ծանրութենէն ելնելով, հարցուց.

— Այս ամէն իմ հարցմանց կը տեսնեմ, որ շատ հմտութեամբ կը պատասխանես, բայց ինդիր մը միայն կը մնա պարզել, ընդհանուր քու վրայ տխրութիւն մը կը տեսնեմ, միթէ կարելի չէ իմանալ թէ ինչի հետեւանք է այդ:

— Ժամանակիս դառնութեան վիճակը, իշխան, ամէն անհատի վրայ իւր ազդեցութիւնն ըրած է կերպով մը. ես էլ բնական թէ իմ բաժինս պէտք էր ունենայի՝ եւ ունեցայ այս ունայնութեան աշխարհիս վրայ, եւ կը գտնեմ, որ շատ ապրեցայ, զարմանք չէ, որ ուրախ չեմ:

— Քառասունը հազիւ անցած այս լեզուն գործածելու եւ այս սրտի տխրութեան համակելու համար պէտք է որ մարդու մը շատ յոյսերն դերել ելած լինին. ես քու գաղտնեաց հետաքրքիր լինելու փափագ չունիմ, բայց խորհուրդ կ'ուտամ, որ ռելիցէ՝ դժբախտութեան եւ բախտին հակառակութեան առջեւ մարդ եթէ մարդ է կորով ունենա եւ չընկճի մինչեւ իւր շունչի վերջի վայրկեանը: Դու դեռ երիտասարդ՝ պատերազմի դաշտի վրայ զենքերու մէջ փորձ առած, ինչպէ՞ս կը համարձակիս այս ծեր զօրավարին առջեւ (ցցնելով զսարգիս Տայեցի), որ Սմբատայ Նիզակակից՝ Զեփթաղայ ահագին մարտից մասնակցէր է, երբ հարիւր հոգուով ի բիւրաւորաց պաշարեալ ոչ օրով, ոչ շաբաթով այլ ամիսներով յուսահատութեան պատերազմը պատերազմէր է, այսպէս խօսիլ: Փոխէ՛ այդ լեզուդ, ո՛վ քաջ, ե՛կ ինձ հետ, տե՛ս որչափ գործ եւ ինչչափ ընդարձակ ասպարէզ կայ առջեւնիս. կամ այն է որ կը կանգնեցնենք այս խեղճ Զայաստան, այս ինկած հայրենիք, կամ իրեն հետ կ'իջնենք գահավեժ... Բայց ոչ, մենք շատ կարելի է, որ իջնենք, բայց նա դեռ կ'ապրի եւ պէտք է ապրի, վասնզի աստուած չի կրնար մեր Նախարարաց, իշխանաց, ազատաց յանցանքը տուժել տալ անմեղ ժողովրդեան, որ մեր լուծը կը տանի, որ զմեզկը սնուցանէ, որ մեր պերճութեանց, մեր քմահաճոյից, մեր անառակութեանց կը ծառայէ, եւ զօր մենք մեր գոռոզ ամբարտաւանութեան մէջ՝ անազատ եւ շինական